50 ՓԱՍՏԱԲԱՆԻ ԿՏՐԱՄԱԴՐՎԻ «ՓԱՍՏԱԲԱՆ ԵԶԵԳԵԼՅԱՆ» ԹՈՇԱԿ

26.07.2016 15:56



Հարգելի փաստաբաններ,

Ֆրանսիայի Հանրապետության քաղաքացի, ՀՀ փաստաբանների պալատի պատվավոր անդամ, բարերար Ռայմոն Եզեգելյանի և Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի միջև շարունակական համագործակցության շրջանակներում՝ **Ռայմոն Եզեգելյանը պատրաստակամություն է հայտնել կանխավճարի կարգով վճարել ՀՀ փաստաբանների պալատի նախագահի կողմից սահմանած կարգով որոշված ևս 50 (հիսուն) փաստաբանի մեկ տարվա անդամավճարները:**

Նշված նախաձեռնության կապակցությամբ ՀՀ փաստաբանների պալատի նախագահի **25.07.2016թ. թիվ 226-Լ որոշմամբ** հաստատվել է **«50 փաստաբանի «Փաստաբան Եզեգելյան» թոշակ տրամադրելու մասին» կարգը**, համաձայն որի՝ շահառուներին որոշելու նպատակով ձևավորված հանձնաժողովը՝ ըստ կարգով նշված առաջնահերթության, նախապատվություն է տալու հետևյալ փաստաբաններին՝

1) ***1991 թվականի հունվարի 1-ից (ներառյալ) հետո ծնված փաստաբաններին՝ ոչ ավել, քան 40 (քառասուն) փաստաբան:*** *Այս խմբում նախապատվությունը տրվում է տարիքով առավել փոքր փաստաբաններին*

2) ***Կին փաստաբաններին, որոնք հանդիսանում են միայնակ մայր՝ ոչ ավել, քան 10 (տասը) փաստաբան:*** *Սույն կարգի իմաստով միայնակ մայր է համարվում ամուսնության մեջ չգտնվող այն կինը, ում խնամքի տակ գտնվում է առնվազն մեկ անչափահաս երեխա, որի ծննդյան վկայականում* ***(ա)*** *բացակայում է երեխայի հոր մասին գրանցումը, կամ,* ***(բ)*** *երեխայի հոր մասին գրանցումը կատարվել է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ մոր ցուցումով, կամ,* ***(գ)*** *երեխայի հայրը մահացել է, կամ* ***(դ)*** *ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով երեխայի հայրը ճանաչվել է անհայտ բացակայող կամ հայտարարվել է մահացած: Այս խմբում նախապատվությունը տրվում է առավել շատ երեխա ունեցող, իսկ երեխաների հավասար քանակի դեպքում՝ առավել փոքր տարիքի երեխա ունեցող փաստաբաններին:*

Կարգին համապատասխան որոշված ընդհանուրը 50 շահառուներին կտրվեն համապատասխան հավաստագրեր:

Հիշեցնենք նաև, որ բարերար Ռայմոն Եզեգելյանի և Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի միջև համագործակցության շրջանակներում 2015 և 2016 թվականների ընթացքում մեկ տարվա անդամավճարների կանխավճարների հավաստագրեր են շնորհվել ընդհանուրը 160 փաստաբանի, որոնցից 80-ը՝ գործունեություն են իրականացնում Հայաստանի Հանրապետության տարբեր մարզերում, իսկ 80-ը՝ Երևան քաղաքում:

Առաջարկվող նորություններ



27.04.2015ՌԱՅՄՈՆ ԵՋԵԳԵԼՅԱՆԻ ԵՎ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՄԻՋԵՎ ԿՆՔՎԵԼ Է ՀՈՒՇԱԳԻՐ

29.04.2015ՀՀ ՄԱՐԶԵՐՈՒՄ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԾԱՎԱԼՈՂ 80 ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻՆ ՇՆՈՐՀՎԵԼՈՒ Է ՄԵԿ ՏԱՐՎԱ ԱՆԴԱՄԱՎՃԱՐԻ ԿԱՆԽԱՎՃԱՐԻ ՀԱՎԱՍՏԱԳՐԵՐ

10.07.2015ՄԱՐԶԵՐԻ 80 ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐ ՍՏԱՑԵԼ ԵՆ ՌԱՅՄՈՆ ԵՋԵԳԵԼՅԱՆԻ ԹՈՇԱԿԻ ՀԱՎԱՍՏԱԳՐԵՐԸ

14.12.2015ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ 80 ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻՆ ՇՆՈՐՀՎԵԼՈՒ ԵՆ ՄԵԿ ՏԱՐՎԱ ԱՆԴԱՄԱՎՃԱՐԻ ԿԱՆԽԱՎՃԱՐԻ ՀԱՎԱՍՏԱԳՐԵՐ

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })